Կ Ա Ր Ծ Ի Ք

ԴԻԱՆԱ ՍՊԱՐՏԱԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ «ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հաշվի առնելով համաշխարհային վերջին զարգացումները, գլոբալիզացումը, որով էլ պայմանավորվում է համաշխարհային ճգնաժամերի ցիկլի կրճատումներն ու հաճախականությունը, ինչպես նաև Կովիդ-19 համավարակով պայմանավորված ցնցումները, որոնք էլ ավելի ցցուն են դարձնում ազգային տնտեսության մրցունակության պահանջը, երկրի տնտեսության մրցունակության բարձրացման խնդիրները դարձել են առավել օրակարգային:

Աշխարհի բազմաթիվ երկրների կողմից վարվող ազատ առևտրային քաղաքականության արդյունքում էլ ավելի է սրվում գլոբալ մրցակցությունը՝ պահանջելով երկրի տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման առավել արդիական և ճկուն մեթոդների կիրառում: Պետք է նկատել, որ երկրի տնտեսության մրցունակությունը պայմանավորված է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների գործունեության արդյունավետությամբ: Որքան էլ արդյունավետ լինի պետության տնտեսական քաղաքականությունը, եթե մասնավոր հատվածում չկիրառվեն համահունչ մոտեցումներ, ապա երկրի տնտեսության մրցունակության բարձրացման ներուժը չի կարող լիարժեք օգտագործվել:

Տնտեսության մրցունակության բարձրացման խնդիրներն արդիական են նաև ՀՀ-ի համար: ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ տնտեսությունը ենթարկվեց կառուցվածքային խոր փոփոխությունների: Հիմնովին կերպափոխվեցին տնտեսական հարաբերությունները, քայքայվեցին տնտեսավարման կառուցակարգերը, կապերն ու փոխհարա-

բերությունները: Եթե պլանային տնտեսության դեպքում գերխնդիրը սահմանված պլան-ների կատարումն էր, ապա շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր կազմակերպության առջև դրվեցին առավել սուր խնդիրներ՝ ներառյալ մրցունակ ապրանքների ու ծառայությունների թողարկումը, որից էլ, ըստ էության, կախված էր տվյալ կազմակերպության ճակատագիրը:

Վերջին տասնամյակներում ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող զարգացումների հիմնական բնութագրիչներից էր մենաշնորհային շուկաների առկայությունը, որոնք խաթարում էին առողջ մրցակցային հարաբերությունները՝ խոչընդոտելով տնտեսության մրցունակության բարձրացմանը: Հեղինակը նշում է, որ տեղի ունեցող վերափոխումները հնարավորություն չեն տվել լիարժեք օգտագործելու ՀՀ-ում առկա ներուժը: Մասնավորապես՝ տեղի է ունեցել մարդկային կապիտալի մեծ արտահոսք, համաշխարհային շուկայում լիարժեք չի ձևավորվել ՀՀ բրենդը, ինչը հիմք է տալիս պնդելու, որ իրականացված քաղաքականությունը շտկման, հստակեցման և վերաուղղորդման կարիք ունի: Միաժամանակ, ՀՀ-ում տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության վերաիմաստավորման համատեքստում անհրաժեշտ է իրականացնել գիտականորեն հիմնավորված հետազոտություններ, ինչով էլ հեղինակը պայմանավորում է հետազոտության թեմայի արդիականությունը:

Այսպիսով, Դ. Ս. Գևորգյանի կողմից ներկայացրած ատենախոսությունը էական կարևորություն ունի, իսկ դրանում դրված խնդիրներն ու քննարկվող հիմնահարցերը արդիական են:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակը ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց հաղթահարման կառուցակարգերի մշակումն է՝ միտված համաշխարհային տնտեսական հարաբերություններում ՀՀ կազմակերպությունների դիրքերի ամրապնդմանը, դրանց կողմից թողարկվող ապրանքների ու ծառայությունների իրացման ծավալների ընդլայնմանը:

Նշված նպատակի իրագործման համար աշխատանքի հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

1. հետազոտել երկրի տնտեսության մրցունակության տեսամեթոդաբանական հիմքերը,
2. համակողմանիորեն դիտարկել երկրի «տնտեսության մրցունակություն» հասկացության վերաբերյալ մոտեցումները,
3. բացահայտել երկրի տնտեսության մրցունակության արդի գործոնների առանձնահատկությունները,
4. ուսումնասիրել տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձը և բացահայտել ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները,
5. վերլուծել ՀՀ տնտեսության մրցունակության արդի վիճակը,
6. իրականացնել ՀՀ տնտեսության մրցունակության գործոնների գնահատում,
7. բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական խոչընդոտներն ու մատնանշել դրանց հաղթահարման հիմնուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է՝ որպես մեկ ամբողջություն և բազմաթիվ փոխկապակցված տարրերից բաղկացած համակարգ, իսկ առարկան ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիներն են:

Հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը

Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական ճանաչողության (վերացարկման, վերլուծության և համադրման, արտածման և մակածման, պատմական և տրամաբանական) մեթոդները, որոնք թույլ են տվել դիտարկել գիտական դրույթների տրամաբանական կառուցվածքը, ընդգծել դրանց ուժեղ ու թույլ կողմերը: Դրանք հնարավորություն են տվել լուծելու հետազոտության մեջ առաջադրված խնդիրները:

Առաջադրված խնդիրների լուծման համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական տնտեսագետների գիտական աշխատանքները:

Ատենախոսության համար որպես տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի, տնտեսական զարգացման և ներդրումների, ֆինանսների նախարարությունների և ԿԲ-ի կողմից հրապարակվող պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հրապարակումները: Կատարված հետազոտության համար օրենսդրական հիմք են հանդիսացել ՀՀ օրենքները և նորմատիվ-իրավական ակտերը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը պարունակում է 36 աղյուսակ, 21 գծապատկեր, շարադրված է 166 մեքենագիր էջում:

Հեղինակը, մասնավորապես առաջին գլխում **«Երկրի տնտեսության մրցունակության տեսական և մեթոդական հիմքերը»** անդադարձ է կատարել մրցունակության հասկացությանը, դրա տարբեր սահմանումներին, ինչպես նաև Համաշխարհային մրցունակության համաթվի որոշման մեթոդաբանությանը: Երկրորդ գլուխը **«ՀՀ տնտեսության մրցունակության արդի վիճակի և մակրոտնտեսական հիմնախնդիրների վերլուծություն»** գերազանցապես նվիրված է վերոնշյալ համաթվի մասով Հայաստանի դիրքին, ինչպես նաև մի շարք վիճակագրական աղյուսակների վերլուծությանը, որի հիմքում Հայաստանի վերջին տարիների մակրոտնտեսական վիճակի ուսումնասիրությունն է: Երրորդ գլխում **«ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման ուղիները»** հեղինակը իրականացրել է վերլուծություն բացահայտելու համաշխարհային մրցունակության համաթվի և տնտեսական աճի միջև կապը, իսկ արդեն երկրորդ մասում փորձ է արել ներկայացնել նոր մոդել տնտեսական մրցունակության և դիտարկել դրա կիրառման հնարավորությունները, դրանից հետո ուսումնասիրվել է միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում: Եզրակացություններն ու առաջարկություններն ամփոփվել են համապատասխան

գլխում, իսկ ռեգրեսիոն վերլուծությանը վերաբերող աղյուսակները զետեղված են հավելվածում:

Հետազոտության գիտական նորույթը

Հետազոտության շրջանակներում բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրների արդի դրսևորումները, ինչպես նաև առաջարկվել են դրանց հաղթահարման մոտեցումներ:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում ստացվել են մի շարք դրույթներ, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

1. Տրվել է «տնտեսության մրցունակություն» հասկացության նոր բնորոշում, որտեղ որպես առանցքային բնութագրիչ է դիտարկվել տնտեսական քաղաքականության ինստիտուտների արդյունավետությունը՝ միտված մարդկային, կապիտալ և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման շնորհիվ տևական ժամանակահատվածով կենսամակարդակի կայուն աճի ապահովմանը:
2. Տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձի քննական վերլուծության արդյունքում բացահայտվել են դրա հիմնարար դրույթներն ու հստակեցվել ՀՀ-ում վերջինների կիրառման հնարավորությունները:
3. Տնտեսաչափական մոդելի միջոցով իրականացվել է ՀՀ տնտեսության մրցունակության գործոնների վերլուծություն, ինչը հնարավորություն է տվել պարզելու առավել ազդեցիկ գործոնների շրջանակն ու բացահայտելու դրանց ներուժի առավել լիարժեք օգտագործման հնարավորությունները:
4. Մշակվել է ՀՀ տնտեսության մրցունակության գնահատման մոդել, որտեղ որպես հիմնական հենասյուներ դիտարկվել են տնտեսական արդյունավետությունը, տեխնոլոգիական զարգացածությունը, մարդկային ռեսուրսները, կառավարման ու արտադրության արդյունավետությունը՝ համապատասխան ենթաբաժիններով:

Ատենախոսության արդյունքների գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ հետազոտության ընթացքում բացահայտված դրույթները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված տնտեսական քաղաքականության մշակման գործընթացում: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունները կարող են ունենալ նաև գիտական նշանակություն և օգտագործվել տնտեսության պետական կարգավորման տեսագործնական հիմքերի վերաբերյալ դասընթացների դասավանդման գործընթացներում:

Ատենախոսությունում ներկայացված հիմնական մոտեցումները և հետազոտության արդյունքներն արտացոլված են հրապարակված վեց գիտական հոդվածներում:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ թերություններից և բացթողումներից: Դրանցից նշեմ հետևյալները.

1. Ատենախոսության 33-րդ էջում հեղինակն անդրադառնում է 2018-2019 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամին հղում անելով որոշ վերլուծաբանների, ովքեր ճգնաժամը պայմանավորում են ինստիտուցիոնալ համակարգի թերություններով: Բացի այն, որ տարեթվերի հետ կապված կա վրիպակ, բացակայում է նաև հղումն այդ վերլուծաբաններին:

2. Նույն էջում հեղինակը կատարել է եզրահանգումներ, որոնք սակայն չեն բխում դրան նախորդող շարադրանքից: Մասնավորապես, հեղինակը խոսելով ֆինանսական ճգնաժամի մասին՝ նշում է, որ «*...Այս պատճառով զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրները պետք է կիրառեն դրամավարկային կարգավորման կոշտ ու զգուշավոր գործիքներ՝ նկատի ունենալով, որ անգամ ամենաարդյունավետ դրամավարկային քաղաքականության գործիքները չեն կարող երկրի տնտեսությունը զերծ պահել ճգնաժամերից:*» Հասկանալի չէ, թե ինչու պետք է այդ երկրները կիրառեն կոշտ դրամավարկային գործիքներ, քանի որ դրանք ի վերջո կարող են հանգեցնել տնտեսական աճի զսպմանը: Մյուս միտքը նույնպես չի բխում իրականացված

վերլուծությունից. *«...Որպես օրինակ մատնանշենք վերջին տարիներին ՀՀ ներմուծվող ապրանքների և ծառայությունների գների ոչ համարժեք բարձրացման փաստը: Երբ ՀՀ արժույթը որոշ չափով արժևորվում է, ապրանքների և ծառայությունների գները ոչ միայն չեն նվազում, այլև, ընդհակառակը, արագ տեմպով աճում են, սակայն, դրա հետ մեկտեղ, միջին աշխատավարձը մնում է անփոփոխ:»*

3. 34-րդ էջում հեղինակը հղում է անում գնողունակության անկման վերաբերյալ Ժողովուրդ օրաթերթի հոդվածին, ինչը տնտեսական մրցունակության վերաբերյալ ատենախոսության հետ անհամատեղելի է և վերլուծության կամ հղման համար առավել արժանահավատ տեղեկատվության աղբյուրներին կարելի էր ապավինել:

4. Նույն էջում հեղինակը նշում է, որ *«...որքան երկիրը բաց է ազատ առևտրի համար, այնքան մրցունակ է:»*, մինչդեռ այս միտքը, եթե հեղինակինը չէ, ապա բացակայում է համապատասխան հղումը, իսկ եթե հեղինակինն է՝ հիմքում չունի համապատասխան վերլուծություն:

5. Հաշվի առնելով վերոգրյալը կարծում եմ, որ Ատենախոսությունում հեղինակի կողմից գիտական նորույթ ձևակերպված առաջին դրույթը խիստ վիճահարույց է, հիմնավորված չեն հեղինակային բնորոշումները, «տնտեսական մրցունակության» նոր սահմանումը բավարար կերպով փաստարկված չէ, ուստի վիճարկելի է դրա նորույթ լինելու հանգամանքը:

6. Ատենախոսությունում հեղինակի կողմից գիտական նորույթ ձևակերպված երկրորդ դրույթի շրջանակներում հեղինակն անդրադարձել է Ճապոնիայի, ԱՄՆ-ի տնտեսություններին՝ որպես տնտեսական մրցունակության առաջատար երկրներ, իսկ այնուհետ ուսումնասիրել է ավելի փոքր, բայց մրցունակ տնտեսությունները՝ Իռլանդիան, Չեխիան, Ֆինլանդիան: Հարկ է նկատել, որ հեղինակը որևէ կերպ չի հիմնավորել այս երկրների ընտրությունը, դրա համար չի կիրառվել համապատասխան մեթոդաբանություն, մասնավորապես ինչ ցուցանիշների հիման վրա են ընտրվել այս երկրները: Մասնավորապես, առավել նպատակահարմար կլիներ հաշվի առնելով ՀՀ առանձնահատկությունները, ինչպիսիք են ծով ելքի բացակայությունը, չորս հարևաններից երկուսի հետ փակ սահմանները, իսկ մյուս հարևանի հետ աշխարհի երկրների կողմից կիրառվող տնտեսական պատժամիջոցները (էմբարգո, սանկցիա), Եվրասիական տնտեսական միության անդամ լինելը, ուսումնասիրել արդյոք նման աշխարհաքաղաքական հարաբերություններ ունեցող

երկրներ կան, որոնք դասվում են տնտեսական մրցունակության համաթվի բարձր ցուցանիշ ունեցող երկրների շարքին, թե ոչ: Ինչ վերաբերում է վերոնշյալ ուսումնասիրությունից բխող ՀՀ-ում կիրառելի ու չափելի առաջարկներին, ապա դրանց մասին անդրադարձ չի արվել այդ գլխում: Հեղինակը, մասնավորապես ամփոփելով նշում է, որ առաջավոր փորձի մեխանիկական ներդրումը հղի է բազմաթիվ վտանգներով, ուստի այն պետք է ձևափոխվի և հարմարեցվի տնտեսական զարգացման օրինաչափություններին:

7. Ատենախոսությունում հեղինակի կողմից գիտական նորույթ ձևակերպված չորրորդ դրույթն ամփոփված է 3.2-րդ գլխում, ինչը նախորդում է միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությանը: Մինչդեռ տրամաբանական կառուցվածքը հուշում է, որ տնտեսական մրցունակության նոր մոդելի մշակումն ու կիրառումը ՀՀ-ում գլուխն իր մեջ պետք է ներառի միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության արդյունքում կատարված եզրակացություններն ու առաջարկությունները: Այս գլխում հեղինակն իրականացրել է Քրոս-կոռելյացիա, որի արդյունքներն ամփոփված են Աղյուսակ 3.2.1-ում, մինչդեռ պարզ չէ, թե որն է նպատակը, քանի որ բոլոր ցուցանիշներն էլ կազմում են նույն համաթվի մի մասը, ուստի պայմանավորում են համաթիվը: Այնուհետև իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, որտեղ հեղինակը պարզապես առանձին-առանձին աղյուսակ 3.2.1-ում ներկայացված ցուցանիշները դիտարկել է որպես անկախ փոփոխական, իսկ որպես կախյալ փոփոխական հանդես է եկել համաթիվը կամ դրա լոգարիթմիկ արժեքը: Հայտնի է, որ լոգարիթմելու դեպքում գործակիցը ցույց է տալիս էլաստիկությունը, մինչդեռ հասկանալի չէ, թե հեղինակն ինչու է մի դեպքում էլաստիկություն դիտարկել, իսկ մյուս դեպքում միավոր փոփոխություն: Փաստացի հեղինակի մոդելը, ազատ անդամով ու մեկ անկախ փոփոխականով ֆունկցիա է, որտեղ անկախ փոփոխականի գործակիցն իր մեջ ընդգրկում է չբացատրված՝ չներառված փոփոխականների միաժամանակյա ազդեցությունն այդ համաթվի վրա, ինչ էականորեն կարող է խեղաթյուրել ընտրված անկախ փոփոխականի ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա: Հարկ եմ համարում նշել, որ նման ռեգրեսիոն վերլուծությունը տնտեսաչափական մոդել համարելը խիստ որոշակի է, ավելին չեն իրականացվել մոդելի կայունության (robustness check) վերլուծություն: Ըստ էության ուսումնասիրվել է համաշխարհային մրցունակության համաթվի բաղկացուցիչ ցուցանիշների կապն այդ համաթվի հետ:

8. Ատենախոսության էջ 153-ից սկսած ամփոփված են հեղինակի կողմից արվող առաջարկությունները: Մասնավորապես, առաջին առաջարկությամբ հեղինակը նշում է, որ պետք է իրականացվի նպատակային և հասցեական քաղաքականություն, մինչդեռ ՀՀ-ում իրականացվող քաղաքականության նպատակայնությունն ու հասցեականությունն ուսումնասիրված չեն ատենախոսության բովանդակային մասում: Ավելին հեղինակն առաջարկում է տրամադրել արտահանող կազմակերպություններին հարկային վարկ, արագացված ամորտիզացիա, նորագույն տեխնոլոգիաների ներկրման դեպքում նվազեցված մաքսատուրքեր, մինչդեռ հեղինակի կողմից չի ուսումնասիրվել, արդյոք, այդ գործիքակազմը կիրառվում է, թե ոչ, եթե այո, որն է դրա արդյունավետությունը: Այդ դեպքում հեղինակի առաջարկությունը առավել ընդհանրականից կարող էր դառնալ թիրախային, որն էականորեն կարող էր բարձրացնել առաջարկության գործառնական նշանակությունը:

Երկրորդ առաջարկությամբ առաջարկվում է կառուցվածքային բարեփոխումների միջոցով կրճատել ՀՀ մրցակցային դիրքերի վրա ազդող բացասական գործոնները, մինչդեռ ատենախոսության մեջ անդրադարձ չի կատարվել 2018 թվականի հեղափոխությունից հետո կատարված կառուցվածքային փոփոխություններին՝ փորձելով գնահատել դրանց արդյունավետությունը:

Չորրորդ առաջարկությամբ հեղինակը նշում է, որ պետք է վերացնել արհեստական մենաշնորհները, մինչդեռ չի մանրամասնում, թե ինչ նկատի ունի արհեստական մենաշնորհ ասելով և արդյոք հարկային բեռի մեղմումը, որը բյուջեի դեֆիցիտի մեծացման աղբյուր կարող է լինել, բարձր պարտքային բեռ ունեցող երկրի համար թույլատրելի գործիք է, թե ոչ, գնահատված չէ նաև նման առաջարկի ներկայացման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի վրա:

Հինգերորդ առաջարկությամբ (էջ 155) առաջարկվում է առավելապես գիտատար՝ ՏՀՏ ոլորտի խթանումը, մինչդեռ այդ ոլորտի խթանումը եղել է թե հեղափոխությունից առաջ, թե շարունակվում է հիմա, որի համար առանձին նախարարություն նույնիսկ վերջերս նախատեսեցին: Ուստի ատենախոսությունն առավելապես կշահեր, եթե

հեղինակն արդեն կիրառվող քաղաքականության վերաբերյալ ներկայացներ արդյունավետության գնահատական և դրա բարելավմանն ուղղված կոնկրետ գործողություններ:

Հինգերորդ առաջարկությամբ (էջ 156) հեղինակն առաջարկում է կիրառել Չեխիայի արտահանման ռազմավարությունը, որտեղ թիրախային կետեր են տեղեկատվության տրամադրում արտահանողների համար, արտահանման զարգացում և առևտրային հնարավորությունների ընդլայնում, մինչդեռ ուսումնասիրված չէ արդյոք նման ինստիտուտներ ներդրված են Հայաստանում և գնահատված չէ դրանց արդյունավետությունը:

Վեցերորդ առաջարկությամբ հեղինակը համարում է, որ իր կողմից առաջարկված մոդելը կարող է կանխատեսել ՀՆԱ, հետևաբար՝ տնտեսական աճ: Մասնավորապես, հեղինակը ԱՏՄ (Ազգային տնտեսական մրցունակություն) համաթվի հիման վրա փորձել է կանխատեսել ՀՆԱ աճի տեմպը, իսկ էջ 133-ում հանգել է այն եզրակացության, որ ԱՏՄ միավոր փոփոխությունը հանգեցնում է ՀՆԱ աճի տեմպի մեկ տոկոս փոփոխության, մինչդեռ Հավելված 7-ում (էջ 188), ներկայացված աղյուսակում նման միտում նկատելի չէ:

Նշված դիտողությունները, կարծում եմ, էական նշանակություն ունեն ատենախոսության գիտական մակարդակի և գործնական նշանակության ընդհանուր գնահատականի վրա:

Եզրակացություն

Ամփոփելով շարադրվածը, կարելի է հավաստել, որ ատենախոս **Դ. Ս. Գևորգյանը** կատարել է տեսամեթոդական բնույթի հետազոտություն, որում առկա են որոշակի տնտեսաչափական տարրեր, ինչպես նաև հետազոտությունը զերծ չէ բովանդակային անհարթություններ: Դրանով պայմանավորված հստակեցման անհրաժեշտություն ուներ հետազոտության նպատակը ու խնդիրները, համոզիչ և հիմնավոր չեն գիտական նորույթ ներկայացրած երկրորդ, երրորդ և չորրորդ դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Դիանա Սպարտակի Գևորգյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրները» թեմայով պաշտպանության ներկայացված թեկնածուական

ատենախոսությունը չնայած համապատասխանում է **Ը.00.02** - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին §Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման¦ 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, սակայն հեղինակին՝ Դիանա Սպարտակի Գևորգյանին տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման հարցը անհրաժեշտ է որոշել՝ ելնելով մասնագիտական խորհուրդի նիստի քննարկման արդյունքերից:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Գ. Կ. Օհանյան

20.07.2020

Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Գ.Կ.Օհանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտքարտուղար՝ Ն. Հ. Դարբինյան